ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Լրացավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 30 տարին: Այս կապակցությամբ ս. թ. դեկտեմբերի 19—20-ը տեղի ունեցավ գիտական նստաշրջան՝ նվիրված ակադեմիայի գիտա-հետազոտական հիմնարկներում ֆունդամենտալ գիտությունների զարգացման գլխավոր ուղղություններին և գիտության ու տեխնիկայի նվաճումները ժողովրդական տնտեսության մեջ լայնորեն ներդնելու խնդիրներին:

«Ֆունդամենտալ գիտությունները և ժողովրդական տնտեսությունը» ընդհանրացնող զեկուցումով հանդես եկավ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը:

Ազգային գիտությունների ակադեմիայի հիմնադրումը պատերազմի դժվարին պահին,— ընդգծեց իր զեկուցման մեջ Վ. Հ. Համբարձումյանը,— ուներ քաղաքական մեծ նշանակություն: Այն միևնույն ժամանակ վկայում էր այն մասին, որ սովետական իշխանության օրոք Հայկական ՍՍՀ-ում գիտական միտքը հասել էր մեծ բարձրության և ստացել մեր ամբողջ Միության գիտական հասարակության լայն ճանաչումը: Անցած տարիների ընթացքում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտնականները նշանակալից հաջողությունների են հասել ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկական, քիմիական, երկրաբանական, կենսաբանական և հասարակական գիտությունների բնագավառներում:

Զգալի աշխատանք է կատարվել բնական և հասարակական գիտությունների հիմնական ուղղությունների զարգացման գծով: Տարեցտարի ընդլայնվում է հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ ներդրման համար անմիջական նշանակություն ունեցող աշխատանքների ծավալը: Մեծացել է հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների հետ տնտեսական պայմանագրային սկզբունքով կատարվող գիտա-հետազոտական աշխատանքների, ինչպես նաև գիտական այն մշակումների քանակը, որոնք կատարվում են հյուղային գիտա-հետազոտական կազմակերպությունների, բուհերի և արդյունաբերական ձեռնարկությունների հետ միասին, որն անշուշտ նպաստում է ժողովրդական տնտեսության մեջ գիտության նվաճումների օգտագործման արագացմանը: Այդ բոլոր վերափոխումները մի վառ օրինակ են, թե սովետական իշխանությունը ինչպիսի նյութական ու բարոյական պայմաններ ստեղծեց հայ մտավորականության համար, գիտությունների, հատկապես ֆունդամենտալ գիտությունների զարգացման համար:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գործունեությունը հենց սկզբից ուղղված է այնպիսի գիտական պրոբլեմների մշակմանը, որոնք առավելագույն օգուտ են բերում ժողովրդական տնտեսությանը, լուծում հանրապետության տնտեսական և կուլտուրական զարգացման ընթացիկ ու հեռանկարային հարցերը: Երկրաբանները իրենց հետազոտություններով նպաստեցին արդյունահանող ձեռնարկությունների հումքային բազայի ընդլայնմանը, օգտակար հանածոների հանքավայրերի տեղաբաշխման ու տարածման օրինաչափությունների ուսումնասիրմանը:

Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի աշխատակիցների կողմից մշակած բժշկական արդյունավետ պրեպարատների մասսայական արտադրության կազմակերպումը այսօր առաջնահերթ հարց է դարձել: Օրգանական քիմիայի ինստիտուտի գիտնականների և արտադրության աշխատողների ընդհանուր ջանքերով կատարելագործվում են տեխնոլոգիական ցիկլեր ու ռեժիմներ, մշակվում նոր նյութեր, բարձրացվում է սարքավորումների արտադրողականությունը: Բուսաբանական ինստիտուտի գիտաշխատողների մշակած հանձնարարականները թույլ են տալիս կրկնակի չափով կրճատել հանրապետությունում անտառահատման ծավալը: Արդյունաբերական հիդրոպոնիկայի հնարավորությունները և հեռանկարները շատ մեծ են մեր ժողովրդական տնտեսության համար: Այդ հետազոտությունները գործնական մեծ հետաքրքրություն են ներկայացնում սննդարդյունաբերության, բժշկության, գյուղատնտեսության, սիրողական բուսաբուծության համար: Ընդհանուր և կիրառական կենսաբանության տարբեր բնագավառներում կատարվող հետազոտություններում ունեցած հաջողությունները թույլ են տալիս զարգացնելու այնպիսի հեռանկարային ուղղություններ, ինչպիսիք են երկրաբանական

միկրոբիոլոգիան, արդյունաբերական մնացուկների միկրոբիոլոգիական վնասազերծումը և այլն: Քվանտային գեներատորների արտադրությունը հանրապետությունում որոշակի դեր խաղաց մի շարք նոր գիտական ուղղությունների ձևավորման գործում, ինչպիսիք են ոչ գծային օպտիկական, քվանտային էլեկտրոնիկան:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտնականները,— նշեց այնուհետև Վ. Հ. Համբարձումյանը,— ուշադիր հետևում են հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացմանը, որոնում իրենց գիտելիքների, փորձի, բնդունակությունների կիրառման նոր ձևեր: Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարը նշեց, որ ժողովրդական տնտեսության հետագա զարգացմանն ըստ ամենայնի նպաստելու առաջավոր գիտնականների նման ձգտումը գիտական հաղորդակցության միակ հիշտ ուղղությունն է: Մեր բազմազգ սովետական գիտության էլ ավելի բարգավաճման գործում,— վերջում ընդգծեց հեռուորը,— մեծ նշանակություն ունի երկրի տարբեր հանրապետությունների գիտնականների բարեկամության, փոխօգնության և համագործակցության կապերի անշեղ ընդլայնումը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գիտական օջախների հետ:

Այնուհետև գիտաժողովում կարդացվեցին մի շարք զեկուցումներ ՀՍՍՀ ԳԱ սիստեմի հիմնարկներում կատարված գործնական բնույթի աշխատանքների մասին:

«Տնտեսագիտությունը և ժողովրդական տնտեսության զարգացումը» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյան), «Մեխանիկայի մի քանի հարցերը և ժամանակակից տեխնիկան» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Ա. Համբարձումյան), «Երկրաբանական գիտությունները արտադրությանը» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Ս. Մկրտչյան), «Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի մի քանի կարևորագույն գիտա-տեխնիկական պրոբլեմները» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Դ. Մ. Մանվելյան), «Կենսաբանական ակտիվ նյութերի սինթեզի հետազոտությունների հիմնական արդյունքները նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Հ. Վարդանյան), «Քիմիայի ինստիտուտի հետազոտությունների արդյունքների գործնական նշանակությունը» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հ. Ռ. Բունիաթյան), «Օրգանական քիմիայի ինստիտուտի գիտա-տեխնիկական մշակումները օրգանական սինթեզի և պոլիմերների բնագավառում» (զեկ.՝ քիմ. գիտ. դոկտոր Ս. Դ. Մացոյան), «Հայաստանի անտառային տնտեսության բարելավման ուղղությամբ բուսաբանության ինստիտուտի գործունեության մի քանի արդյունքների մասին» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Հ. Ղազարյան), «Արդյունաբերական ֆլորոսպոնիկայի հնարավորությունները» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Դ. Ս. Դավթյան), «Ֆիզիոլոգիայի ինստիտուտի հետազոտությունները գործնական տեսանկյունից» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Ա. Բակունց), «Միկրոբիոլոգիայի ինստիտուտի հետազոտությունների գործնական նշանակությունը ժողովրդական տնտեսության զարգացման որոշ բնագավառների համար» (զեկ.՝ կենս. գիտ. դոկտոր Է. Դ. Ավետիսյան), «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի գիտական գործունեության արդյունքների պրակտիկ օգտագործման մի քանի հարցեր» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Է. Հ. Միրզաբեկյան), «Քվանտային էլեկտրոնիկան և Հայաստանի արդյունաբերությունը» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Մ. Լ. Տեր-Միքայելյան):

Գիտական նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանի կոմկուսի և կառավարության ղեկավարները՝ ընկերներ Ա. Ե. Քոչինյանը, Դ. Ա. Արզումանյանը, Պ. Պ. Անիսիմովը, Ս. Ս. Թովմասյանը, Կ. Ս. Դեմիրճյանը, Լ. Պ. Զարիրջանյանը, Լ. Ա. Ստեփանյանը:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

1973 թ. դեկտեմբերի 21-ին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի մեծ դահլիճում տեղի ունեցավ Երևանի պետական համալսարանի և ԴԱ պատմության ինստիտուտի միացյալ գիտական նստաշրջանը՝ նվիրված բազմավաստակ հայագետ, ակադեմիկոս Հակոբ Համազասպի Մանանդյանի ծննդյան 100-ամյակին: Երևանի պետհամալսարանի ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Դ. Ներսիսյանը բաց անելով գիտական նստաշրջանն ասաց.

— Հ. Մանանդյանը հայ պատմագիտական մտքի ամենափայլուն դեմքերից մեկն է: Նրա գիտական ուսումնասիրություններում նոր լուսաբանություն են ստացել հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության բազմաթիվ կրոնական հարցեր: Մանանդյանը խոր հետք է թողել